ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<09>> ----------07----------2025թ. N ՄՈ/666 -Ա

ք. Արմավիր

«ԱՅԳԵԿԻ ՄՈՒՇԵՂ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐԵՍՏԱԿԵՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և հիմք ընդունելով «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Արեստակեսյանի 2025 թվականի հուլիսի 8-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Արեստակեսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2025 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 22-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:

2. Ռուզաննա Արեստակեսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Մարուսյա Մելքոնյանին:
3. 2025 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 22-ը ներառյալ «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Մարուսյա Մելքոնյանի աշխատավարձի վճարումը իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Ռուզաննա Արեստակեսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 25-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ